Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմ

Ապատեղեկատվություն, օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիա և միջամտություն (FIMI). Իրազեկող ուղեցույց ընտրական գործընթացում

Ներածություն

21-րդ դարի սկզբից տեղեկատվական միջավայրի զարգացումը՝ ներառյալ փոխշփումների համաշխարհայնացումը և սոցիալական մեդիայի վերելքը, նպաստավոր հող է ստեղծել, որպեսզի տեղեկությունն օգտագործվի որպես «զենք» սպառնալիք ներկայացնող պետական կամ էլ ոչ պետական դերակատարների կողմից՝ իրենց օրակարգի առաջ մղման նպատակով: Որպես «հիբրիդային» սպառնալիքների զինանոցի հիմնարար բաղադրիչ՝ **օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիան և միջամտությունը** (Foreign Information Manipulation and Interference (FIMI)) ռազմավարական «զենք» է, որը համակարգված և փոխհամաձայնեցված ձևով կիրառվում է թշնամական/ոչ բարեկամական դերակատարների կողմից:
Դրա հիմնական նպատակն է խաթարել ժողովրդավարական գործընթացների բնականոն ընթացքը կամ ազդել անհատների և հասարակությունների որոշումների կայացման վրա:

Ավտորիտար պետական դերակատարները և նրանց հետ փոխկապակցված ուժերը հաճախ կիրառում են օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիան և միջամտությունը, այդ թվում՝ ապատեղեկատվությունը, ընտրական գործընթացները թիրախավորելու, իրենց շահերին համապատասխան կերպով դրանց արդյունքների վրա ազդելու նպատակով: Տեղեկատվական մանիպուլյացիան կարող է խեղաթյուրել ժողովրդավարական բանավեճը, խորացնել անվստահությունն ու բևեռացումը հասարակության մեջ, ինչպես նաև սրել ճգնաժամերը՝ տարածելով վախ և շփոթություն:

Ապատեղեկատվությանը, ինչպես նաև օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիային և միջամտությանը հակազդելու այս ուղեցույցի նպատակն է բարձրացնել ռիսկերի վերաբերյալ իրազեկվածությունը, վեր հանել ընտրական գործընթացներում դրանց ամենատարածված մեթոդները և ներկայացնել դիմակայունության որոշ հիմնական մեխանիզմներ:

Ինչո՞ւ է դա կարևոր Հայաստանի համար

Հայաստանի շուրջ աշխարհաքաղաքական բարդ միջավայրը և ընթացիկ ներքաղաքական ակտիվությունն ստեղծել են պայմաններ օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիայի և միջամտության արշավների ակտիվացման համար: Առնվազն վերջին մեկ տարվա ընթացքում Հայաստանի դեմ իրականացվել են լայնածավալ և համակարգված ապատեղեկատվական արշավներ, որոնք նպատակ ունեն ներազդել հանրային տրամադրությունների վրա, սերմանել խուճապ, խարխլել վստահությունը պետական ինստիտուտների ու ազգային անվտանգության նկատմամբ: Ապատեղեկատվական ներազդեցությունները վաղուց արդեն վերածվել են ազգային անվտանգության սպառնալիքների, որոնց չեզոքացման ուղղությամբ էական ջանքեր են գործադրվում:

Հայաստանում կայանալիք առաջիկա խորհրդարանական ընտրությունների համատեքստում սպասվում է տեղեկատվական նման սպառնալիքների զգալի աճ: Ընտրական գործընթացներն օտարերկրյա պետական և ոչ պետական դերակատարների համար նպաստավոր միջավայր են ստեղծում՝ կիրառելու մանիպուլյատիվ մարտավարություններ, որոնք ուղղված են հասարակության բևեռացմանը, Հայաստանի որդեգրած ժողովրդավարական ուղու և ընտրական գործընթացների ապալեգիտիմացմանը: Հետևաբար նման միջամտությունների կանխարգելումն ու դրանց դեմ ակտիվ պայքարն առանցքային նշանակություն ունեն ոչ միայն ազատ և թափանցիկ ժողովրդավարական գործընթացների ապահովման, այլև Հայաստանի ինքնիշխանության և հասարակական համախմբվածության պահպանման համար:

Ի՞նչ է օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիան և միջամտությունը (FIMI)

Օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիան և միջամտությունն (FIMI) առավելապես վարքագծի օրենքով չարգելված ձև է, որն **սպառնում** է կամ կարող է **բացասաբար ազդել** արժեքների, ընթացակարգերի և քաղաքական գործընթացների վրա: Նման գործունեությունը բնույթով **մանիպուլյատիվ** է, իրականացվում է **միտումնավոր և կորդինացված** ձևով: Դերակատարները կարող են լինել ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական, այդ թվում՝ նրանց հետ փոխկապակցված ուժեր, թե՛ իրենց երկրի ներսում, թե՛ դրա սահմաններից դուրս:

Օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիան և միջամտությունը (FIMI) միայն ապատեղեկատվություն չէ և բոլոր ապատեղեկատվությունները չեն, որ օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիա և միջամտություն (FIMI) են: FIMI-ն կենտրոնանում է օտարերկրյա դերակատարների **վարքագծի** վրա (մարտավարություններ, մեթոդներ և ընթացակարգեր), որ միտումնավոր մանիպուլացնում է տեղեկատվությունը: Ի տարբերություն դրա՝ ապատեղեկատվությունը կարող է ծագել ներքին դերակատարներից և հիմնականում կենտրոնանում է նարատիվների (պատումների) վրա:



FIMI-ն ընտրությունների ընթացքում

Ինչո՞ւ են թիրախավորվում ընտրությունները

Ընտրությունները՝ որպես ժողովրդավարության և դրա արժեքների արտահայտություն, հանդիսանում են առաջնային թիրախ այն օտար դերակատարների համար, որոնք ձգտում են ապակայունացնել դրանց բնականոն ընթացքը: Այդ դերակատարները ձգտում են խաթարել վստահությունը քաղաքացիների և այն ինստիտուտների միջև, որոնք կոչված են ներկայացնել նրանց: Ընտրական գործընթացներն ապակայունացնելու այս ցանկությունը հիմնականում գործում է ընտրություններին ընդառաջ և նախընտրական քարոզարշավի ընթացքում: Ընտրությունների թիրախավորումն սպառնալիք ներկայացնող դերակատարներին թույլ է տալիս միջամտել ազգային քաղաքական ինքնորոշման գործընթացին:

Ի՞նչ ժամանակային փուլերով է անցնում թշնամական/ոչ բարեկամական արշավը

Ընտրությունների օրվանից առաջ FIMI արշավները երկարաժամկետ կտրվածքով կարող են անցնել ակտիվացման որոշակի փուլերով՝ շարունակական գործընթացի միջոցով ձևավորելով տեղեկատվական միջավայրը: Ընտրություններին նախորդող վերջին օրերն ամենավճռականն են, քանի որ սպառնալիք ներկայացնող դերակատարները կարող են կենտրոնացնել զգալի ռեսուրսներ՝ ընտրողներին մոլորեցնելու նպատակով՝ հատկապես թիրախավորելով կոնկրետ թեկնածուների: FIMI արշավները և ապատեղեկատվական արշավները, սակայն, չեն ավարտվում ընտրության օրվանից հետո. սպառնալիք ներկայացնող դերակատարները կարող են շարունակել թուլացնել վստահությունը ժողովրդավարության՝ մասնավորապես հենց ընտրական գործընթացի նկատմամբ կամ վիճարկել դրա արդյունքները:



Սպառնալիքների զարգացման փուլերը

Ո՞վքեր են հարձակումների թիրախում

Ընտրական գործընթացում ներգրավված յուրաքանչյուր դերակատար ինքնին կարող է լինել թիրախ FIMI արշավների համար.

- Ինստիտուտներն ու առաջնորդները
- Մեդիան և մամուլը
- Միջազգային գործընկերները
- Քաղաքական կուսակցությունները և թեկնածուները
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները
- Քաղաքացիները

Ընտրությունների ընթացքում կիրառվող ամենատարածված մեթոդներն են.

Բևեռացում. Հասարակության բաժանումը խիստ հակադիր խմբերի կամ կարծիքների, որտեղ ծայրահեղ դիրքորոշումներն ու շահերը բախվում են՝ վտանգելով ցանկացած նրբերանգային քննարկում կամ փոխզիջում:

Զգացմունքային լեզու. Խոսույթ, որ պարունակում է ուժեղ հուզական եզրույթներ՝ հատկապես այնպիսիք, որոնք առաջացնում են բացասական ազդեցություն, օրինակ՝ վախ կամ զայրույթ:

Ինքնության կեղծում. Լսարանին մոլորեցնելը՝ անձի կամ կազմակերպության ինքնությունը կեղծելով կամ նմանակելով: Նպատակը կարող է լինել նրանց հեղինակությանը վնաս հասցնելը, հուզական վնաս պատճառելը կամ մանիպուլյացիա տարածելը:

Համատեքստի խեղաթյուրում. Իմաստը փոփոխելու նպատակով տեքստը, ձայնային կամ տեսողական նյութը միտումնավոր այլ համատեքստում ներկայացնելը կամ կարևոր նախապատմական տեղեկությունը բաց թողնելը:

Արհեստական բանականությամբ ստեղծված FIMI. արհեստական բանականության գործիքների օգտագործումը՝ մանիպուլյատիվ բովանդակության որակն ու ծավալը մեծացնելու, ինչպես նաև դրա լայնամասշտաբ տարածումը ավտոմատացնելու համար:

Ի՞նչ կարող եք անել ապատեղեկատվության և FIMI-ի դեմ

Քաղաքացիներն ապատեղեկատվության և օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիայի և միջամտության արշավների հիմնական թիրախային լսարաններից են, հետևաբար յուրաքանչյուր անհատ կարող է հետևել որոշ սկզբունքների՝ ռիսկերը կառավարելու և հնարավոր ազդեցությունը մեղմելու համար:

Ուշադիր կարդացեք և ստուգեք բովանդակությունը նախքան այն սոցիալական ցանցերում կամ նամակագրության հարթակներում տարածելը («Ստուգիր նախքան տարածելը»):

Ուշադրություն դարձրեք բովանդակության նպատակին. արդյոք դա փաստական տեղեկատվություն է, անձնական կարծիք, գովազդ, թե սպամ:

Ստուգեք աղբյուրները. ով է ստեղծել տեքստը կամ կայքը, արդյոք աղբյուրները ճանաչելի և վստահելի են:

Եթե կասկածներ ունեք, ապա ստուգեք պատկերներն ու տեսանյութերը: Կարող եք օգտագործել պատկերի հակադարձ որոնման գործիքներ: Դա օգնում է որոշել, թե արդյոք բովանդակությունը մանիպուլացվել է կամ հանվել համատեքստից:

Բազմազանեցրեք տեղեկատվության աղբյուրները. հետևեք վստահելի տարբեր հարթակների/ալիքների և տեսակետների, որպեսզի ծանոթանաք տարբեր կարծիքների և ինքնուրույն ձևավորեք ձեր դիրքորոշումը:

Ո՞րն է Վարչապետի աշխատակազմի դերը Հայաստանում համակարգային արձագանքման գործում

Վարչապետի աշխատակազմը Հայաստանում հանդիսանում է կենտրոնական դերակատար օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիայի և միջամտության սպառնալիքների նկատմամբ պետական համակարգված հակազդման գործում: Համակարգման հիմնական ուղղությունները ներառում են.

Մշտադիտարկում և վերլուծություն
Տեղեկատվական միջավայրի շարունակական մշտադիտարկում՝ բացահայտելու մանիպուլյատիվ նարատիվները, ներազդման մեխանիզմները և կոորդինացված արշավները:

Վաղ նախազգուշացման համակարգեր
Մեխանիզմների ներդրում՝ FIMI-ի վաղ փուլում հայտնաբերման և արագ արձագանքի համար:

Միջգերատեսչական համակարգում
Միասնական դիրքորոշման ձևավորման նպատակով համագործակցություն համապատասխան պետական մարմինների հետ (ԱԳՆ, ԱԱԾ և այլն):

Հանրային հաղորդակցություն
Թափանցիկ և ժամանակին հաղորդակցություն՝ ապատեղեկատվության ազդեցությունը նվազեցնելու և վստահությունը բարձրացնելու համար

Միջազգային համագործակցություն
Գործընկերություն միջազգային կառույցների և գործընկեր պետությունների հետ փորձի փոխանակման և համատեղ արձագանքի մշակման ուղղությամբ:

Կարողությունների զարգացում

Պետական ծառայողների և հաղորդակցության պատասխանատուների վերապատրաստում՝ FIMI սպառնալիքների ճանաչման և հակազդման հմտությունների ամրապնդման համար:

Նոր գործիքներ և հարթակներ

Վարչապետի աշխատակազմն աջակցում է առաջադեմ տեխնոլոգիական լուծումների մշակմանն ու ներդրմանը, ինչպիսին է Stugel.am հարթակը: Հարթակը կիրառելով արհեստական բանականություն՝ միաժամանակ վերլուծում է պատկերները, տեսանյութերը և տեքստային բովանդակությունը՝ գնահատելով դրանց հավաստիությունը: Օգտագործելով բնական լեզվուների մշակման (Natural Language Processing (NLP)) և լեզուների մեծ մոդելներ (Large Language Models (LLMs))՝ համակարգն իրական ժամանակում համադրում է տեղեկատվությունը բարձր հուսալիություն ունեցող աղբյուրների հետ՝ ապահովելով վստահելի տեղեկատվության տրամադրումը:

Հասկացություններ

Ապատեղեկատվություն (Disinformation). կեղծ կամ մոլորեցնող տեղեկատվություն, որ ստուգելի է, ստեղծվում, ներկայացվում և տարածվում է տնտեսական շահույթի կամ հանրությանը դիտավորյալ խաբելու համար և կարող է հանրային վնաս պատճառել:

Մարտավարություններ, մեթոդներ և ընթացակարգեր (Tactics, Techniques, and Procedure (TTP)). FIMI-ի համատեքստում «մարտավարությունները, մեթոդները և ընթացակարգերը» վարքագծի ձևեր են, որ խաբեության մտադրությամբ օգտագործվում են սպառնալիք ներկայացնող դերակատարների կողմից տեղեկատվական միջավայրը մանիպուլացնելու համար: «Մարտավարությունները» գործառնական նպատակներն են, որոնց սպառնալիք ներկայացնող դերակատարները փորձում են հասնել: «Մեթոդներն» այն գործողություններն են, որոնց միջոցով նրանք փորձում են հասնել դրանց: «Ընթացակարգերը» տարբեր մարտավարությունների (կամ հարձակման փուլերի) մեթոդների հատուկ համադրություններն են, որոնք ցույց են տալիս մտադրություն և կարող են յուրահատուկ լինել սպառնալիք ներկայացնող տարբեր դերակատարների համար:

Սպառնալիք ներկայացնող դերակատարը (Threat Actor) կազմակերպություն, պետություն, անհատ կամ խումբ է, որն անվտանգային ռիսկ է ներկայացնում՝ մասնակցելով վնասաբեր գործողությունների, ինչպիսիք են FIMI արշավները, կիբեռհարձակումները և այլն: Սպառնալիք ներկայացնող դերակատարները կարող են ունենալ տարբեր դրդապատճառներ՝ ներառյալ ֆինանսական շահույթը, քաղաքական ազդեցությունը, լրտեսությունը կամ պառակտումը:

Կոորդինացված ոչ իրական վարքագիծ (Coordinated Inauthentic Behaviour (CIB)). կազմակերպված, դիտավորյալ և մանիպուլյատիվ գործողություններ, որոնք նպատակ ունեն մոլորեցնել լսարանին՝ օգտագործելով բազմաթիվ կեղծ կամ ոչ իսկական հաշիվներ, որոնք համատեղ տարածում են որոշակի հաղորդագրություններ:

Թրոլ(ներ) և բոտ(եր). FIMI-ի համատեքստում «թրոլը» անհատ (կամ ավտոմատացված հաշիվ՝ բոտ) է, որը դիտավորյալ առցանց հրապարակում է հրահրող կամ մոլորեցնող բովանդակություն՝ հուզական արձագանքներ սադրելու և տարաձայնություններ սերմանելու նպատակով: Թրոլները հաճախ հանդիսանում են ավելի լայն ազդեցության գործողությունների մաս և կարող են գործել ինքնուրույն կամ որպես կոորդինացված դերակատարներ «թրոլային ֆերմաներում» կամ ազդեցության ցանցերում:

ԵՐԵՎԱՆ
2026